ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

16.08.2011թ.

Տավուշի մարզի Արճիսի գյուղական համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ պաշտոնի համար.

1.*Համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջին ենթախումբ, առաջատար մասնագետ-հաշվապահ, ծածկ. 3.1-1*

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) բարձրագույն կրթություն.

բ) ՀՀ Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Գնումների մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», ՀՀ օրենքների իմացություն.

գ) Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

դ) ռուսերեն լեզվի իմացություն.

Մրցույթը կկայանա դրա մասին հայտարարության հրապարակմանը հաջորդող 30-րդ օրը, իսկ ոչ աշխատանքային օրվան համընկնելու դեպքում՝ հաջորդող աշխատանքային օրը ժամը 12^{00}-ին Արճիսի գյուղապետարանի վարչական շենքում հասցեն՝ Տավուշի մարզ Արճիսի գյուղապետարան, հեռ. 0266 6 38 90 :

Դիմող ՀՀ քաղաքացիները Արճիսի գյուղապետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս).
2. տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթի՝ դիպլոմի պատճենը բնօրինակի հետ միասին.
3. արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկ.
4. երկու լուսանկար 3 x 4 չափսի.
5. անձնագիր և անձնագրի պատճենը.

Մրցույթին մասնակցելու համար ՀՀ քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի պատճենները հետ չեն վերադարձվում:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10^{00}-ից մինչև 16^{00} , բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրի և հարցաշարերի ծանոթանալու համար կարող են դիմել Արճիս համայնքի աշխատակազմին:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 31.08.2011թ.

Արճիսի գյուղապետ՝ Ս. Միկիչյան

գ. Արճիս
16.08.2011թ.